

## ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագիր

ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման նպատակով որպես ծրագրային միջոցառում, իրականացվում է ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագիր: Այն նպատակաուղղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, հատկապես գյուղական բնակավայրերում, ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը:

Ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին Հիմնադրամի կողմից ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն /փոխառության տրամադրում/՝ Հիմնադրամի գործընկեր առևտրային բանկերի միջոցով՝ առավելագույնը 10 մլն դրամ, տարեկան 8 տոկոս դրույքաչափով, մինչև 6 տարի մարման ժամկետով: